



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հունիսի 17-ի քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 22.3-րդ գլուխը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 149.16-րդ հոդվածով.

«Հոդված 149.16. Հաշտեցումը արարությունը պաշտպանական որոշման վերաբերյալ դիմումներով

1. Հաշտարարության վերաբերյալ սույն գլխով նախատեսված դրույթները չեն տարածվում «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի հիման վրա և սույն օրենսգրքի 35.1-րդ գլխով սահմանված կարգով արձակված պաշտպանական որոշումների նկատմամբ: Նշված դեպքերում ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց միջև հաշտեցումն իրականացվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

»:

Հոդված 2. Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 35.1 գլխով.



«Գլուխ 35.1 ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ

Հոդված 201.1. Դիմում տալը

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ դիմումը տրվում է ենթադրաբար ընտանիքում բռնության ենթարկված անձի բնակության վայրի կամ վերջինիս համաձայնությամբ դիմում ներկայացնող ակջակցության կենտրոնի գտնվելու վայրի ընդհանուր իրավասության դատարան:

Հոդված 201.2. Դիմումի բովանդակությունը

1. Պաշտպանական որոշման կայացման վերաբերյալ դիմումն ի լրումն սույն օրենսգրքի 87-րդ հոդվածով նախատեսվող պահանջների, նաև ներառում է՝

1) տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կիրառվելու են Պաշտպանական որոշմամբ նախատեսվող սահմանափակումները.

2) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի դրույթները.

3) տեղեկություններ՝ պատասխանողի և ենթադրաբար ընտանիքում բռնության ենթարկված անձի միջև ընտանիքում և(կամ) արյունակցական կապերի մասին.

4) ընտանիքում բռնության իրական սպառնալիքի առկայությունը հիմնավորող տեղեկություններ.

5) «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կոնկրետ սահմանափակումների կիրառման մասին նշում.

6) պատասխանողի՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու հանգամանքը:

2. Առկայության դեպքում դիմումին կցվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և



ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան պատասխանողի նկատմամբ ընդունված՝ ընտանիքում բռնության անթույլատրելիության մասին նախազգուշացման մասին և (կամ) անհետաձգելի միջամտության որոշումները:

Հոդված 201.3. Դիմումի քննությունը

1. Պաշտպանական որոշման դիմումների քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

2. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

2 . Դատարանը գործը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է դիմումը ստանալուց 3 օրվա ընթացքում:

3 . Դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին դիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում դիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից 7 օրվա ընթացքում:

Հոդված 201.4. Դատական ակտերի որոշումը

1. Գործի քննության արդյունքում դատարանը կայացնում է գործն ըստ էության լուծող հետևյալ դատական ակտերը՝

- 1) դիմումը բավարարելու և պաշտպանական որոշումը կայացնելու մասին.
- 2) դիմումը մերժելու մասին.
- 3) դիմումը մասնակի բավարարելու և դիմումում նշված սահմանափակումներից մեկը կամ մի քանիսը կիրառելու մասին.
- 4) դիմումը մասնակի բավարարելու և դիմումում նշված սահմանափակումների փոխարեն այլ սահմանափակում (սահմանափակումներ) կիրառելու մասին:



2. Դիմումի քննության ընթացքում առերևույթ հանցակազմի հատկանիշներ հայտնաբերելիս դատարանը, առանց վարույթը կասեցնելու, դիմում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին՝ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու միջնորդությամբ:

3. Դատարանի կայացրած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

4. Պաշտպանական որոշումը դրանում նշված ժամկետից շուտ կարող է վերացվել դատարանի կողմից՝ ընտանիքում բռնություն գործադրած և ընտանիքում բռնության ենթարկված անձի՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կնքված հաշտության դեպքում: Ընտանիքում բռնության ենթարկված կամ բռնություն գործադրած անձը պաշտպանական որոշումը վերացնելու նպատակով դատարան ներկայացնում է դիմում և աջակցության կենտրոնի մասնկացությամբ կնքված հաշտության համաձայնությունը: Պաշտպանական որոշման գործողությունը դադարեցնելու մասին որոշումը դատարանը կայացնում է առանց նիստ հրավիրելու: Վերացնելիս դատարանը հաշվի է առնում աջակցության կենտրոնի ընտանիքում բռնություն գործադրած և ընտանիքում բռնության ենթարկված անձանց միջև կայացված հաշտության վերաբերյալ տրված եզրակացությունը: Ընտանիքում եզրակացությունը տալուց առաջ աջակցության կենտրոնի համապատասխան մասնագետները գրուցում են ընտանիքում բռնության ենթարկվածի և բռնարարի հետ:

5. Պաշտպանական որոշումը կարող է վերացվել նաև ընտանիքում բռնություն գործադրած անձի դիմումով, եթե ապացուցվում է, որ ընտանիքում բռնության ենթարկված անձը դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ է ձեռնարկում, որոնք ուղղված են ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից պաշտպանական որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելուն:

65. Որոշման մեջ նշվում է պաշտպանական որոշման կիրառման ժամկետը: Պաշտպանական որոշումը կարող է նախատեսել՝

1) ընտանիքում բռնության ենթարկվածի կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց ապաստարան տեղափոխելու անհրաժեշտությունը:



2) ընտանիքում բռնության ենթարկվածների բուժման ծախսերի իրականացում բռնարարի կողմից:

76. Պաշտպանական որոշումը ուղարկվում է ընտանիքում բռնություն գործադրած և ընտանիքում բռնության ենթարկված անձանց, իսկ եթե դիմումը ներկայացվել է ոչ ընտանիքում բռնության ենթարկված անձի կողմից, ապա նաև այն ներկայացրած անձին: Անհրաժեշտության դեպքում որոշման պատճենները տրամադրվում են Ոստիկանությանը և «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված Լիազոր մարմնին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությանը՝ որոշման կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով: Եթե որոշումն առնչվում է անչափահաս կամ անգործունակ անձի շահերին, ապա այն ուղարկվում է նաև խնամակալության և հոգեբարձության մարմնին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո: